ներէն 37 ձեռագիր։ Ասոնցմէ ոմանք՝ կ՚երեւի Զմմառ չեն հասած. ուրիշներ՝ ա՛յս կամ ա՛յն պատճառով անմատչելի եղած են երկու ցուցակագրող Հայրերուն։ Այս դուրս մնացած ձեռագիրներու ցանկը տրուած է Ցաւելուածին մէջ, այնպէս՝ ինչպէս նշանակած են ցուցակագրող Հայրերը։ Չեմ գիտեր ինչո՞ւ այս խորհրդաւոր անորոշութիւնը, երբ այլեւս լաւ ծանօթ է որ Զմմառի հաւաքածոյէն բաւական թիւով ձեռագիրներ՝ վանական իշխանութեան կողմէ ծախու հանուած են ժամանակին։

Առանց հաշուելու Ցաւելուածին 37 անհետացած գրչագիրները, այս ցուցակին մէջ ներկայացուած են 259 ձեռագիրներ, որոնցմէ հնագոյնն է 1117էն (Գրիգոր Աստուածաբանի ճառք) Սամշուլդէ գրուած, Թղթեայ։ Իսկ նորագոյնը 1888էն։ Ձեռագիրներուն 50ը ԺԹ. դարէն են, իսկ 88 հատն ալ ԺԸ. դարէն։

Կարեւոր ձեռագիր մըն է Ցուցակիս թիւ 431ը, «Գիրք Թղթոց» մը, 1298–9ին գրուած, Կիլիկիա։

Հաւաքմանս մէջ, զարմանալիօրէն սակաւաթիւ են Աւետարանները, հազիւ հինգ հատ, եւ բոլորն ալ զուրկ նշանակելի կարեւորութենէ։ Կան բազմաթիւ Շարականներ ու Մաշտոցներ։ Կարեւորներն են Ժողովածուները։

Հատորը կ՚աւարտի ձեռագիրներու ժամանակագրական ցանկով, ինչպէս նաեւ յատուկ անուններու այլ ցանկերով։

Զարմանալիօրէն՝ Անտոնեաններու ձեռագրական հաւաքածոն աղքատ է որակով։ Նոյնիսկ պակող 37 ձեռագիրներն ալ միասին նկատած, բացի 966 Թուականի Աւետարանէն, ակնառու բան մը չկայ հոն։ Եւ սակայն կ՚ակնկալուէր որ իրենց նման պատկառելի Միաբանութիւն մը, 1700էն ասդին, յաջողած ըլլար ձեռք բերել աւելի արժէքաւոր ձեռագիրներ։ Ասով հանդերձ՝ ըսել չենք ուզեր թէ Անտոնեանց հաւաքածոն զուրկ է կարեւորութենէ։ Մենք սրտանց երախտապարտ ենք որ Անտոնեան Հայրերը գոնէ այսքանը կրցեր են փրկել եւ մեր օրերուն հասցնել։

Ց. ՔԻՒՐՏԵԱՆ



## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱԲՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՑԻ. – Պատմութիւն։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 311։

ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ.– Հայոց գիր եւ գրչութիւն։ Երեւան, Պետ. Համալսարանի հրտ. 1973, էջ 371։

ԱԹԱՑԵԱՆ Ռ. Ս. (Խմբ.). – Հազար ու մի խաղ։ Երեւան, ՀԿԿ Կոմիտէի հրտ. 1969, էջ 134։

ԱՂԱՑԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ.– Երկերի Ժողովածու (հատոր Բ.)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 354։

ԱՂԱՑԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ.– Անահիտ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 50։

ԱՄԻՐԲԵԿԵԱՆ ՄԻՔԱՅԷԼ ԱՐՇԱԿԻ. – Վերջին հողակտորի վրայ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 403։

ԱՐԵՒՇԱՏԵԱՆ Ս. Ս.– Փիլիսոփայական գիտութեան ձեւաւորումը հին Հայաստանում, Ե–Զ դդ. (ռուսերէն)։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 350։

ԱՒԱԳԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ ԴԱՒԹԻ.– Հայաստանի անհետացած եւ անհետացող կենդանիները։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1971, էջ 47։

ԲՈՌՆԱԶԵԱՆ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԵՎԱՌԻ. Սոցիալ–տնտեսական յարաբերութիւնները Կիլիկեան Հայկական Պետութիւնում, ԺԲ–ԺԴ դարերում։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 319։

ԲՐԵԺՆԵՒ Լ. Ի.– Կուսակցական շինութեան ակտուալ պրոբլեմների մասին։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 611։

ԲՐԵԺՆԵՒ Լ. Ի. – Ցանուն արդարացի դեմոկրատական խաղաղութեան, յանուն ժողովուրդների անվտանգութեան և միջազգային համագործակցութեան։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 46։

ԳԷՈՐԳԵԱՆ ԱՍՏՂԻԿ ԲԱԳՐԱՏԻ. – Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 28, եւ 48 տախտակներ։

ԳԻՒՂԲՈՒԴԱՂԵԱՆ Ս. Վ. – Հայերէնի ուղղագրութեան պատմութիւն։ Երեւան, Պետ. Համալսարանի հրտ. 1973, էջ 432։

ԳՈՐԾԱԿԱԼԵԱՆ ՀԱՑԿ ՆԻԿՈՂՈՍԻ.– Հայկական տառատեսակներ։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 107։

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ.– Գրականութեան մասին (հրատարակութիւն Մինաս Հիւսեանի)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 203։

ԴԱՆԻԷԼԵԱՆ ԿԱՐԼԷՆ ԱՐՏԱՇԷՍԻ.– Հայ գիւղագրութիւնը ԺԹ. դարում։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 570։

ԴԱՒԹԵԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՐՄԵՆԱԿԻ.– Երկերի ժողովածու. հտր. Ա. (Բանաստեղծութիւններ)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 440։

ԴԱՒԹԵԱՆ ՎԱՀԱԳՆ ԱՐՄԵՆԱԿԻ. – «Ո՛տայր ինձ գծուխ ծխանի»։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 50։

ԴԱՒՌՅԵԱՆ ՌԱԶՄԻԿ ՆԻԿՈՂՈՍԻ.– Մեղրահաց։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 198։

ԶԱՔԱՐԵԱՆ ԱԼՄԱՍՏ ԳՐԻԳՈՐԻ. – Ի. դարի սկիզբի Հայոց բանաստեղծութիւնը։ Ակունքները եւ զարգացման ուղիները։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 328։

ԹԱՀՄԻԶԵԱՆ ՆԻԿՈՂՈՍ ԿԻՐԱԿՈՍԻ. – Ներսէս Շնորհալին՝ երգահան եւ երաժիշտ։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 247։

ԹՈՎՄԱՍԵԱՆ ՆԵՐՍԷՍ ՌԱՖԱՅԷԼԻ. – Հայ սոցիալ–տնտեսական միտքը՝ վաղ Միջնադարում։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 208։

ԽՍԱՀԱԿԵԱՆ ԱՒԵՏԻՔ. – Երկերի ժողովածու, Ա. հատոր։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 463։

© National Library of Armenia

ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱՒԵՏԻՔ. – Արձակ (Կազմող՝ Իսահակեան Աւիկ)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 381։

ԻՍԱՀԱԿԵԱՆ ԱՒԵՏԻՔ.– Լռութեան ապտակը։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 220։

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ ԱՒԱԳԻ.– Էրեբունի բերդ–քաղաքի պատմութիւն՝ ըստ արձանագրական ու հնագիտական տուեալների։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1971, էջ 199։

ԼԱՆԴՍԲԵՐԳ Գ. Ս.– Օպտիկա։ (Թարգմանութիւն ռուսերէն չորրորդ վերամշակուած հրատարակութիւնից)։ Թոյլատրուած է ՍՍՀՄ բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան մինիստրութեան կողմից, որպէս ուսումնական ձեռնարկ՝ պետական համալսարանների համար։ Երեւան, Պետ. Համալսարանի հրտ. 1973, էջ 997։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՌՈՒԲԷՆ ՀԱՅԿԻ. – Անաւարտ Նամակ. Պատմուածքներ. Վիպակներ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 464։

ԽԱՉԵՐԵԱՆ ԼԵՒՈՆ ԳԷՈՐԳԻ.– Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մէջ։ Երեւան, «Լոյս» հրտ. 1973, էջ 231։

ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ ՍԻԼՎԱ ԲԱՐՈՒՆԱԿԻ. – Քարաւանները դեռ քայլում են։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 509։

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԲԱԲԿԷՆ ԿԱՐԱՊԵՏԻ. – Հայրենի ծուխ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 247։

ԿՈՒԼԻԵՒ ԿԱՅՍԻՆ.– Բարի աչքով։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 107։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ Վ. Հ. – Տիեզերագիտութեան փիլիսոփայական հարցերը (զեկուցումների, ելոյթների եւ յօդուածների հաւաքածու [ռուսերէն])։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 427։

ՀԱՍՐԱԹԵԱՆ ՄՈՒՐԱՏ ՄԱՐԳԱՐԻ. – Սիւնիքի ԺԷ–ԺԸ դարերի ճարտարապետական համալիրները։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 188։

ՂԱՐԻԲՋԱՆԵԱՆ ԳԷՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ.– Անմոռանալի հանդիպումներ։ Երեւան, «Լոյս» հրտ. 1973, էջ 86։

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ.– Ժամանակագրութիւն։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 373։

ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԷՍԻ.– Հայաստանի նախնադարեան նըշանագրերը եւ նրանց ուրարտա–հայկական կրկնակները։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 81։

ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ ՀԵՆՐԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ. – Հայկական տառատեսակներ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1972, էջ 127։

ՄՈՒՇԵՂԵԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՏԱՇԷՍԻ.– Հայաստանի դրամական գանձերը. հտ. Ա.։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 184 եւ 40 աղիւսակներ։

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԼԵՒՈՆԻ. Էրեբունիի որմնանկարները։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 83 եւ 58 նըկարներ։

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՀԵՆՐԻԿ ՎԱՀԱՆԻ. – Բեմական խօսքի պոէտիկան։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 246։

ՈՍԿԱՆԵԱՆ ԱՐՈՒՍ ՏԻԳՐԱՆԻ.– Ժողովածու – ալպոմ։ Երեւան, Հայկական Թատերական Ընկերութեան հրտ. 1973, էջ 363։

ՉԱՐԵՆՑ ԵՂԻՇԷ.– Ընտիր Երկեր։ Բանաստեղծութիւններ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 434։

ՊԱՐՍԱՄԵԱՆ ԱՆԱՀԻՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ. – Փիւնիկ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 87։

ՊԵՏՐՈՍԵԱՆ ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆԻ.– Հաճելի զբաղմունք։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1969, էջ 193։

ՊԵՏՐՈՍԵԱՆ ՎԱՐԴԳԷՍ ՀԱՄԱԶԱՍՊԻ.– Դեղատուն «Անի»։ Հայկական էսքիզներ։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 299։

ՍԱՐԳՍԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԴՈՒԻՆԻ.– Բարեւ, բարի արեւ....։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 534։



ՍԱՐԳՍԵԱՆ Վ. Ս., ՏՈՆՈՅԵԱՆ Ռ. Ն., ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. Բ. եւն.– Մաթեմատիկայի ձեռնարկ։ Նախապատրաստական բաժանմունքների ունկնդիրների եւ բուն ընդունուողների համար։ Երեւան, Պետական Համալսարանի հրտ. 1973, էջ 345։

ՍԵՒԱԿ ՊԱՐՈՅՐ ՌԱՓԱՅԷԼԻ.– Երկերի ժողովածու։ Հատոր Գ. (Պոէմներ)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 341։

ՍԵՒԱԿ ՊԱՐՈՅՐ ՌԱՓԱՅԷԼԻ.– Երկերի ժողովածու։ Հատոր Դ. (Պոէմներ)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 325։

ՍԵՒՈՒՆՑ ԳԱՐԵԳԻՆ ՍԵՒԻԻ.– Թեհրան։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 507։

ՍՏԵՓԱՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ. – Կենսագրական բառարան. երեք հատորով (հրտ. Ա–Թ)։ Երեւան «Հայաստան» հրտ. 1973, էջ 382։

ՏԻԳՐԱՆԵԱՆ ԷԴՄՈՆԴ ԱՐՄԷՆԻ.– Հասարակական շէնքերի ճարտարապետական նախագծման հիմունքները։ Երեւան, «Լոյս» հրտ. 1973, էջ 309։

ՏԱԼԵԱՆ ՇԱՐԱ.– Դէմքեր, դէպքեր, մտքեր։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 255։

ՏԻՉԻՆԱ ՊԱՎԼՈ եւ ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿԻ.– Հայաստանի եւ Հայ Կուլտուրայի մասին։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 250։

ՓԱՐՍԱԴԱՆԵԱՆ ՌԱՖԱՅԷԼ ՍԵՐԳԷՅԻ.– Հայաստանի առողջապահութեան պատմութիւն, 1828–1965։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 481։

ՓԵՐԻԽԱՆԵԱՆ Ա. Գ.– Սասանեան դատաստանագիրք. «Մատեան հազար դատաստանաց» (ռուսերէն)։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1973, էջ 575։

ՖԵՆԻՄՈՐ ԿՈՒՊԵՐ.– Գազանորսը։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 578։

.....–
Գիտութիւնը Հայաստանում 50 տարում։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Բնագիտութեան եւ Տեխնիկայի Խորհուրդի հրտ. 1973, էջ 953։

.....–
Լեռնային Ղարաբաղի բանահիւսութիւնը (Գրառում, բնագրի պատրաստումը եւ ծանօթութիւնները՝ Մ. Մ. Գրիգորեան – Սպանդարեանի)։ Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրտ. 1971, էջ 477։

.....–
Մեծ հայրենական զօրավարներն ու զօրապետները (Խմբ. Կեսիլիով Ա. Ն., Թրգմն. Ջաղեթեան Հ. Հ.)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 597։

.....–
Ալադդինը եւ կախարդական լամպը։ Արաբական հէքեաթ (Թգմն. Հ. Հայրապետեան)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 35։

.....–
Լենին Վլադիմիր Իլյիչ. Կենսագրութիւն (Թրգմն. Ղարիբջանեան Գ. Բ. եւ Ղազանջեան Վ. Վ.)։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 1081։

.....–
Լեւոնիդ Իլյիչ Բրեժնեւի այցը Ամերիկայի Միացեալ Նահանգներին (1973, Յունիս 18–25)։ Ճառեր եւ փաստաթղթեր։ Երեւան, «Հայաստան» հրտ. 1973, էջ 161։

© National Library of Armenia